# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան

համայնք,

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան

1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 ,

hatsavan.kotayk@mta.gov.am


ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 178
*30 օգոստոսի 2019թ.*

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2019թվականի օգոստոսի 28-ի թիվ 35-Ա,թիվ 36-Ա և թիվ 37-Ա որոշումները:

Առդիր՝ **3** թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ./093-212366/*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 35-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի,շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002թվականի դեկտեմբերի 26-ի օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,նկատի ունենալով այն հանգամանքը,որ Նորիկ Թումանյանին-2/4,Էմմա Քլեր Գրիգորյանին-1/4,Մայքլ Հրաչ Գրիգորյանին-1/4 սեփականության իրավունքով պատկանող 0.12հա բնակավայրերի հողատարածքի քարտեզագրման արդյունքում նրան պատկանող հողամասի մակերեսը կազմել է 0.1234 հա /07-041-0013-0005 կադաստրային ծածկագրով/:
Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0.0034 հա մակերեսը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:Այն ընդգրկված չէ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներ ցանկում,չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում,հնագիտական,պատմամշակույթային հուշարձանների պահպանության գոտիներում,բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ՝

***որոշում եմ***

1. Ճանաչել Նորիկ Թումանյանի-2/4,Էմմա Քլեր Գրիգորյանի-1/4,Մայքլ Հրաչ Գրիգորյանի-1/4 սեփականության իրավունքը Հացավան համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 07-041-0013-0005 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.1234 հա հողամասի նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԱԳԿ միասնական ստորաբաժանմանը գրանցում կատարելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

20 19թ.օգոստոսի 28
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 36-Ա

## ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Սարգիս Մուշեղի Սարգսյանի դիմումը՝

***որոշում եմ***

1. Սարգիս Մուշեղի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հացավան համայնքում գտնվող պոմպակայանին տալ՝Գառնի խճուղի թիվ 4 հասցե:
2. Սարգիս Մուշեղի Սարգսյանը պարտավոր է Հացավան համայնքի բյուջե վճարել հասցե տրամադրման ծառայության վճար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2019թ. Օգոստոսի 28
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 37-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝

***որոշում եմ***

1. 2019թվականի օգոստոսի 29-ին ժամը $11^{00}$-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ՝հետևյալ օրակարգով.
   1) Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 21-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2019 թ. Օգոստոսի 28
գ.Հացավան